


ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԸ
(ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սեն Արևշատյանի
ծննդյան 80-ամյակի առթիվ)

Լրացավ փիլիսոփայական գիտությունների դոկտոր, Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս Սեն Մուրենի Արևշատյանի ծննդյան 80-ամյակը: Եվ արդեն 55 տարի է, որ նա իր աշխատություններով հարստացնում է ժամանակակից հայագիտությունը՝ միաժամանակ նպաստելով, որ հայ հին և միջնադարյան գրական ժառանգությունն ու առհասարակ հայ հոգևոր մշակույթը միջազգային ճանաչում գտնեն և իրենց արժանի տեղը գրավեն մշակույթի ընդհանուր պատմության մեջ:



Սեն Արևշատյանը ծնվել է 1928 թ. հունվարի 7-ին Երևանում: Հայրը՝ Մուրեն Արևշատյանը, մեծ հարգանք վայելող մտավորական էր. նա զուգորդում էր արվեստն ու հումանիտար գիտելիքը, Թատերական ինստիտուտի դասախոս էր և եղավ հռետորության առաջին բուհական ձեռնարկի հեղինակը:

1951 թ. Սեն Արևշատյանը գերագանցության դիպլոմով ավարտել է Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետը, 1951–1954 թթ. Հայաստանի ԳԱ ասպիրանտուրայում մասնագիտացել է հայ հին և միջնադարյան փիլիսոփայության պատմության մեջ: 1956 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն XIV–XV դդ. մատենագիր, ականավոր գիտնական Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքների վերաբերյալ: 1954–1959 թթ. Ս. Արևշատյանը եղել է ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի սեկտորի գիտաշխատող: 1959 թ. ասպիրանտել է ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հին ձեռագրերի նորաստեղծ գիտահետազոտական ինստիտուտ՝ Մատենադարան, իբրև սկզբնաղբյուրների գիտական թարգմանության բաժնի վարիչ: Այս ժամանակից Մատենադարանի հետ են կապված նրա ամբողջ կյանքն ու աշխատանքը: 1973 թ. Արևշատյանը ղեկավարել է Մատենադարանի հին բնագրերի ուսումնասիրման և հրատարակման բաժինը, իսկ 1982 թ. մարտին նշանակվել է Մատենադարանի տնօրեն: Սեն Արևշատյանը համատեղության կարգով եղել է նաև ՀԽՍՀ ԳԱ «Պատմա-բանասիրական հանդեսի» պատասխանատու քարտուղարը (1958–1960 թթ.), փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող (1972–1979 թթ.), իսկ այնուհետև ու

մինչև օրս՝ ինստիտուտի հայ փիլիսոփայության պատմության գիտաթեմատիկ խմբի գիտական ղեկավարը:

Ս. Արևշատյանը հեղինակ է ավելի քան 150 գիտական աշխատությունների, այդ թվում՝ առանձին գրքերով տպագրված շուրջ 30 մենագրությունների ու բազմաթիվ հոդվածների, որոնք լույս են տեսել ոչ միայն Երևանում, այլև Մոսկվայում, Փարիզում, Վարշավայում, Շտուտգարտում, Ս. Պետերբուրգում, Աթենքում, Կահիրեում և այլուր: Դրանք վերաբերում են հիմնականում հայ հին և միջնադարյան փիլիսոփայության պատմությանը, բայց դրանց ընդգրկումն իրականում շատ ավելի լայն է, իսկ տեսական առումով դրանք պարունակում են հայկական մշակույթին և նրա պատմությանը վերաբերող ընդհանուր տեսական հարցադրումներ: Այս տեսակետից գիտական լուրջ արժեք են ներկայացնում նրա «Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները» գիրքը (Երևան, 1957), «Փիլիսոփայական գիտության ձևավորումը Հին Հայաստանում» դոկտորական ատենախոսությունը, որը նա պաշտպանեց 1971 թ. (ռուսերեն հրատ.՝ Երևան, 1973), «Միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական դպրոցների պատմության շուրջը» (Երևան, 1980), «Դավիթ Անհաղթ» (Մոսկվա, 1980), «Գլաձորի համալսարանը՝ միջնադարյան Հայաստանի լուսավորության կենտրոն» (Ս. Մաթևոսյանի հեղինակակցությամբ, Երևան, 1984) մենագրությունները: Դրանցից յուրաքանչյուրը բերում էր նոր գաղափարներ, մշակույթի պատմության ժամանակաշրջանների նոր իմաստավորում, գրավոր հուշարձանների նոր ընթերցում:

Այս ամենով հանդերձ, Ս. Արևշատյանի գիտական վաստակի կարևորագույն մասը հայ փիլիսոփայության պատմության ու առհասարակ հայ հին և միջնադարյան հոգևոր մշակույթի պատմության աղբյուրագիտական հիմքի ամրապնդումն ու հարստացումն է: Ս. Արևշատյանը, նաև ուրիշների աշխատակցությամբ, պատրաստել, ծանոթագրել, մեկնաբանել է, աշխարհաբար և կամ ռուսերեն թարգմանությամբ ներկայացրել է մատենագրական այնպիսի հուշարձաններ, ինչպիսիք են «Հերմեյ Եռամեծի առ Ասկղեպիաս սահմանք», Ջենոն իմաստասերի «Յադագս բնութեան», Հովհաննես Երզնկացու (Պլուզի) «Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք», «Անանուն Մեկնութիւն Մտորոգութեանցն Արիստոտելի», Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւնը», Գրիգոր Տաթևացու «Սողոմոնի առկնէրի մեկնությունը» (հանգամանալից առաջաբաններով և ծանոթագրություններով) և այլն: Մատենագրական մի քանի կարևոր հուշարձանների դեպքում նա աշխատակցել է բանասիրական գիտությունների դոկտոր Քնարիկ Տեր-Դավթյան – Արևշատյանի հետ, որին բաժին է հասնում դրանց համար իրեն հասցեագրված գովասանքներից:

Աղբյուրագիտության բնագավառում կատարված աշխատանքը գնահատելու համար պետք է հիշել, որ գրական երկի, և առանձնապես հին և միջնադարյան հուշարձանի, քննական բնագրի պատրաստումը դասական իմաստով բանասիրական՝ ստուգաբանական, պատմահամեմատական տքնաջան աշխատանք է, մի պատմական վերակազմություն է. այդ կերպ պատմական երկը, իր ծանոթագրություններով, տարընթերցումներով, մեկնաբանություններով դառնում է ինքնու-

րույն, հեղինակային, եզակի գիտական աշխատություն: Համատեղվում են պատմաբանը և մշակութաբանը, ազգագրագետն ու հնագետը, լեզվաբանն ու բանասերը: Մեն Արևշատյանը լավագույնս մարմնավորում է այս իմացություններն ու հմտությունները. հին ու նոր ժամանակների, Արևելքի և Արևմուտքի պատմության, փիլիսոփայության ու մշակույթի պատմության հրաշալի իմացություն, լեզուների, այդ թվում՝ դասական գրական լեզուների գործնական կիրառություն:

Ս. Արևշատյանը մասնակցություն է ունեցել «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական ութհատորյակի ստեղծմանը: Ի մի բերելով հայ փիլիսոփայության պատմության ուսումնասիրողների կարևորագույն նվաճումները՝ Ս. Արևշատյանը այդ հրատարակության երկրորդ, երրորդ և չորրորդ հատորներում ամփոփ ներկայացրել է V–XVIII դդ. հայ փիլիսոփայության պատմությունը: Նրա խմբագրությամբ են լույս տեսել Հովհան Որոտունեցու «Վերլուծութիւն Մտորոգութեանցն Արիստոտելի», Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրք» և Վահրամ Ռաբունու «Մեկնութիւն Մտորոգութեանցն Արիստոտելի» մեծարժեք երկերը՝ քննական բնագրերով և ռուսերեն թարգմանություններով: Նա խմբագրել է նաև մեր նշանավոր միջնադարագետներ Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» և Վ. Չալոյանի «Հայոց փիլիսոփայության պատմություն» ռուսերեն մեկհատորյակներն ու Եղիշեի «Վարդանանց պատմության»՝ Հ. Օրբելու ռուսերեն թարգմանությունը, Ք.Տեր-Դավթյանի «Հայկականվարքեր և վկայաբանություններ (V–XVII դդ.)», «Հայոց նոր վկաներ» ռուսերեն թարգմանությունները:

Մեծ է Ս. Արևշատյանի վաստակը Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգության ուսումնասիրման և նրա միջազգային ճանաչման գործում: 1960–1980 թթ. նա հրատարակել է Դավիթ Անհաղթի երեք աշխատությունների քննական բնագրերը՝ ռուսերեն զուգահեռ թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով: Ս. Արևշատյանը կազմել ու աշխարհաբար թարգմանությամբ հրատարակել է նաև Դավիթ Անհաղթի երկերի միհատորյակը: Նրա առաջաբանով ու ծանոթագրություններով 1975 թ. Մոսկվայում «Փիլիսոփայական ժառանգություն» մատենաշարով ռուսերեն լույս տեսավ հայ մտածողի երկերի միհատորյակը: Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հորեյանի օրերին այն ունեցավ նաև երկրորդ հրատարակությունը: Վերջապես, հորեյանի առթիվ Ս. Արևշատյանը պատրաստել, ծանոթագրել և ծավալուն առաջաբանով հրատարակել է Դավիթ Անհաղթի փիլիսոփայական չորս երկերի գրաբար միհատորյակը: Ամենքը միաբերան պնդում են, որ առանց Ս. Արևշատյանի ավելի քան քսանամյա նախապատրաստական տքնաջան աշխատանքի հազիվ թե հնարավոր լիներ իրագործել Դավիթ Անհաղթի ծննդյան 1500-ամյա հորեյանի տոնակատարությունը, և այն էլ այդպիսի ծավալով ու միջազգային հնչեղությամբ: Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի՝ Ս. Արևշատյանի կազմած գրաբար քննական բնագիրը դարձել է դասական տեքստ այդ երկի օտարազգի թարգմանիչների և ուսումնասիրողների համար:

Բայց Ս. Արևշատյանը, որպես տեսաբան, ավելին է արել Դավիթ Անհաղթի փիլիսոփայական ժառանգության միջազգային ճանաչման համար: Դավթի երկերը,

իրենց հունարեն տարբերակով, շրջանառվել են ամբողջ միջնադարում, և դա հիմք է տվել Ս. Արևշատյանին առաջադրելու և ապա տարիների ընթացքում ավելի ու ավելի հիմնավորելու իր վարկածը, որ Դավիթ Անհաղթը եղել է նշանավոր արեուպագիտյան գրվածքների հեղինակներից մեկը:

Պատմագիտական տեսության բնագավառում Ս. Արևշատյանի մեկ ուրիշ խոշոր ավանդը վերաբերում է հայ մշակույթի պատմության մեջ միարարական գրական և ընդհանուր մշակութային ժառանգության ունեցած իսկական տեղին: Այս խնդիրն առաջադրել էր Լևոն Խաչիկյանը «Հովհաննես Քոնեցի. Յադագս քերականին» գրքում: Եվ ահա Ս. Արևշատյանը «Միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական դպրոցների պատմության շուրջը» աշխատության մեջ ըստ էության առաջին անգամ փաստական քննության է առնում միջնադարյան Եվրոպայի լատինական գրականության հայերեն թարգմանությունները, մասնավորաբար Բարդուղիմեոս Բոլոնացու և Պետրոս Արագոնացու հատկապես հայ միջավայրի համար հայերեն գրած կամ լատիներենից հայերեն թարգմանած աշխատությունները որպես հայրենական գրականության իրողություններ: Եվ ընդհանրապես, Ս. Արևշատյանի կարծիքով՝ XIV և հետագա դարերի հայ մտածողների հայացքների շատ առանձնահատկություններ անհնար է վերհանել և ըմբռնել առանց հաշվի առնելու հայ մշակույթի փոխազդեցություններն արևմտյան միջնադարյան գրականության հետ:

Գիտության քարոզչությունը Ս. Արևշատյանի կենսակերպն է, որովհետև այդ կերպ էլ նա, որպես իր գործի նվիրյալ, հանրությանը ներկայացնում է հայկական մշակույթի գանձերը: Նա դասախոսություններ է կարդացել արտասահմանյան շատ երկրներում, գիտական զեկուցումներով և հաղորդումներով մասնակցել է միջազգային նստաշրջանների ու գիտաժողովների՝ ամենուր ներկայացնելով հատկապես հայագիտությունը և ամեն անգամ ավելացնելով մի նոր երանգ, բացելով մի նոր տեսանկյուն:

Ս. Արևշատյանը 25 տարի՝ 1982–2007 թթ., եղել է Մատենադարանի տնօրեն, իսկ այժմ Մատենադարանի կառավարման խորհրդի նախագահն է: Նա անկորուստ պահեց Մատենադարանը 1990-ական թվականների ծանր տարիներին: Ս. Արևշատյանի տնօրինության տարիներին ձեռագրերի հավաքածուն ավելացել է շուրջ 1500 մատյաններով, հրատարակվել են հարյուրից ավելի հայագիտական աշխատություններ, կազմակերպվել են բազմաթիվ գիտաժողովներ և ցուցահանդեսներ Եվրոպայի մայրաքաղաքներում:

Նա պատրաստել է գիտության տասնյակ թեկնածուներ և դոկտորներ, բայց շատ ավելի է ուղղակի իմաստով նրա աշակերտների թիվը:

Սեն Արևշատյանը Երևանի պատվավոր քաղաքացի է, Հայաստանի պետական մրցանակի դափնեկիր, պարգևատրվել է շքանշաններով ու մեդալներով: Նա «Բանբեր Մատենադարանի» տարեգրքի գլխավոր խմբագիրն է, «Պատմա-բանասիրական հանդես»-ի և ՀՀ ԳԱԱ «Լրաբեր»-ի խմբագրական խորհուրդների անդամ, Հայ-հնդկական բարեկամության ընկերության պատվավոր նախագահը,

Եվրոպայի մշակույթի ընկերության և «Պո-Արաքս» ընկերության (Վենետիկ) անդամ, Փիլիսոփայական միջազգային ակադեմիայի, Բնության և Հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի իսկական անդամ, «Արարատ» միջազգային ակադեմիայի (Փարիզ) թղթակից անդամ, Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի, ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի գիտխորհուրդների անդամ:

Ս. Արևշատյանը այսօր էլ մեծ եռանդով շարունակում է հայագիտությունը հարստացնել նոր, մնայուն գործերով: Դրա վառ ապացույց են վերջերս հրատարակած կոթողային աշխատությունները՝ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» ռուսերեն թարգմանությունը (Ք. Տեր-Դավթյանի հեղինակակցությամբ, Երևան, 2004), Մեսրոպ Մաշտոցին վերագրվող «Սուրբ Գրիգորի վարդապետության» աշխարհաբար նոր թարգմանությունը (Երևան, 2007), որը նա կատարել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Հայ եկեղեցու հայրեր» մատենաշարի ծրագրի համար, «Հայոց փիլիսոփայության պատմություն. Հին շրջան և վաղ միջնադար» (Կ. Միրումյանի հեղինակակցությամբ, Երևան, 2007) և մի շարք ուշագրավ հոդվածներ՝ հրատարակված Հայաստանում և արտասահմանում:

Մաղթում եմ Սենին երկա ը-երկա ը տարիների կյանք ի շահ հայագիտության ու նաև՝ հավատալով, որ ինձ համար շարունակվելու է իր հետ շփվելու մշտական հմայքը, իր հետ հարցեր քննելու և բանավիճելու բացառիկ հաճույքը:

ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ